ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/29 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) 2024թ. կարիքների համար թվով 4 ջեռուցման սարքերի մատակարարման նպատակով՝ վարչապետի աշխատակազմի և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի միջև 10.01.2024թ. կնքվել է N ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/29 պայմանագիրը՝ 2 544 000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, 12.02.2024թ. կողմերի միջև կնքված N1 Համաձայնագրով սահմանվել է, որ ապրանքը պետք է մատակարարվի համաձայնագիրը ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 օրվա ընթացքում:

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով

նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է պայմանագրի N 2 հավելվածով:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող՝ վարչապետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Սպասարկում» ՊՈԱԿ-ը 08.04.2024թ. թիվ 01/173 գրությամբ դիմել է Աշխատակազմին՝ տեղեկացնելով, որ Ընկերությունը հրաժարվել է մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը և առաջարկել նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: ***Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե 15 օրից ավելի խախտվել է ծառայության մատուցման ժամկետը***:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կոզմից ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 10.01.2024թ. կնքված N ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/29 ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջովին լուծված: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջը՝ Պայմանագիրը լուծելու վերաբերյալ հայտարարությունը 15.04.2024թ. հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ***ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով, Պատվիրատուն արձանագրում է, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն՝ հրաժարվելով Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելուց՝ խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ընդ որում, Աշխատակազմը 25.04.2024թ. դրությամբ Ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները վճարված լինելու հանգամանքը հավաստող որևէ փաստաթուղթ չի ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը, և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ